ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-21/22

ք. Երևան «10» Սեպտեմբեր 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամը, ի դեմս տնօրեն՝ Ս. Լպուտյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 90880800 (իննսուն միլիոն ութ հարյուր ութսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Շևչենկո 34
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	« Ամերիա Բանկ » ՓԲԸ
Հ/Հ 900011005130	Հ/Հ 1570018417800100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02560522
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	Տնօրեն՝
---------- Վ. Գասպարյան	---------- Ս. Լպուտյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 10 » 05 2021թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-21/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	22111110/51	Դասագիրք	**Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 2» դասագիրքը /2-րդ դասարան/, հեղ. Հ.Տ.Թումանյան** **Բովանդակային չափանիշներ** 2-րդ դասարանի <<Շախմատ 2>> դասագիրքը բաղկացած է 112 էջից: Դասագիրքը համապատասխանում է հանրակրթական դպրոցի <<Շախմատ>> առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներին: Դասագիրքը ամբողջությամբ նկարազարդ է և յուրաքանչյուր խաղաքար ներկայացվում է հեքիաթային կերպարներով համահունչ տվյալ թեմային: Ներածություն և Ծանոթություն շախմատի հետ բաժիններում ներկայացված է շախմատ խաղի համառոտ պատմությունը, խաղատախտակը և խաղաքարերի անվանումները, ինչպես նաև հիշատակվում են հայազգի աշխարհահռչակ շախմատիստները: Հորիզոնականներ և ուղղաձիգներ, Դաշտերի անվանումները, անկյունագծեր, Խաղատախտակի կառուցվածքը , Խաղաքարերի սկզբնական դասավորությունը թեմաներում մանրամասն ներկայացված է խաղատախտակի կառուցվածքը, խաղաքարերի արտաքին տեսքը, դասավորությունը, ինչպես նաև բացատրվում են շախմատ խաղալու անհրաժեշտ կանոնները: Արքա, Թագուհի թեմաներում ներկայացված է արքայի և թագուհու քայլերը, նրանցով խաղաքար վերցնելը և այդ խաղաքարերի կարևոր այլ առանձնահատկությունները:Շախ ներկայացված է շախմատում ամենակարևոր հարձակման տեսակը:Շախ և մատ և Քայլ դեպի մատ թեմաներում ներկայացված է մատը, որպես խաղի նպատակ և շախից ազատվելու տարբերակները:Պատ բացատրվում է ոչ-ոքիի այս տարբերակը: Նշված են խաղաքարի քայլերը, նրանցով խաղաքար վերցնելը և այդ խաղաքարերի կարևոր այլ առանձնահատկությունները: Շախմատ խաղի կարևոր կանոններ ներկայացվում է խաղի վարման կարևոր կանոնները և խաղաքարերի բաժանումը ըստ տեսակների:Քայլի գրանցում ներկայացվում է շախմատի քայլերի գրանցման կարևորությունը, գրանցման կանոնները և պայմանական նշանները: Մատ վերջին հորիզոնականում ներկայացվում է վերջին հորիզոնականի թուլության գաղափարը և ծանր խաղաքարերի միջոցով դրանից օգտվելու և հակառակորդի արքային մատ հայտարարելու տարբերակները:Մանկական մատ թեմայում ներկայացվում է սկզբնական դասավորության ժամանակ արքային մոտ գտնվող ամենաթույլ դաշտը և սխալ խաղի արդյուքում այդ դաշտից մատ հայտարարելու ձևերը: Գրեթե յուրաքանչյուր թեմայից հետո դասի վերաբերյալ ներկայացված են կարևոր հարցեր, որոնց պատասխանելով սովորողը ինքնուրույն կարող է ստուգել արդեն ստացված գիտելիքները: **Տեխնիկական չափանիշները** Չափը՝ 60x84 1/8 Ծավալը ՝10 տպ. մամուլ Էջերի քանակը՝ 80	հատ	38382	1000	38382000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

2	22111110/52	Դասագիրք	**Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 2» վարժությունների տետրը /2-րդ դասարան/,/ հեղ. Հ.Տ.Թումանյան** **Բովանդակային չափանիշներ** Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից,ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողներիարժեհամակարգի ձևավորմանը:Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 54 առանձին դասերից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 60x84 1/8 Ծավալը ՝10 տպ. մամուլ Էջերի քանակը՝ 80	հատ	39254	450	17664300	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

3	22111110/75	Դասագիրք	**Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 3» վարժությունների տետրը /3-րդ դասարան/, հեղ. Հ.Տ.Թումանյան** **Բովանդակային չափանիշներ** Վարժություններիտետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին:Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը:Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին:Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր:Պատկերազարդումը պետք է ներառի սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: **Տեխնիկական չափանիշները** Չափը՝ 60x84 1/8 Ծավալը ՝ 9,5 տպ. մամուլ Էջերի քանակը՝ 76	հատ	38823	450	17470350	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

4	22111110/90	Դասագիրք	**Գնման առարկա է հանդիսանում «Շախմատ 4» վարժությունների տետրը /4-րդ դասարան/ հեղ. Հ.Տ.Թումանյան** **Բովանդակային չափանիշներ** Վարժությունների տետրի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Վարժությունների տետրը պետք է նպաստի շախմատային գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Վարժությունների տետրը պետք է նախատեսված լինի գործնական աշխատանքների միջոցով անցած նյութի յուրացման և ամրապնդման համար: Պետք է բաղկացած լինի 48 առանձին դասերից, լրացուցիչ վարժություններից և 2 թեմատիկ գրավոր աշխատանքներից: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսպլանով հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Վարժությունների տետրի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապատասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին: Պատկերազարդումը պետք է ներառի ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային շախմատին վերաբերող նյութեր: Պատկերազարդումը պետք է ներառիսովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: **Տեխնիկական չափանիշները** Չափսը՝ 60x84 1/8 Ծավալը ՝ 8 տպ. մամուլ Էջերի քանակը՝ 64	հատ	38587	450	17364150	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

1-4 - րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:
Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:
Դասագրքերն ու վարժությունների տետրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:
Դասագրքերի և վարժությունների տետրերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակի:

ԳՆՈՐԴ

_____ Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Ս. Լպուտյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաստիքաժին	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն [2]	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Շախմատ 2»,	11866	1610	3091	3270	1697	3884	2676	3744	3765	646	1656	477	38382
2	Դասագիրք «Շախմատ 2» /վարժությունների տետր/	12446	1620	3091	3250	1745	3884	2857	3744	3765	652	1661	539	39254
3	Դասագիրք «Շախմատ 3» /վարժությունների տետր/	12297	1555	2985	3260	1812	3850	2855	3673	3754	669	1584	529	38823
4	Դասագիրք «Շախմատ 4» /վարժությունների տետր/	12293	1590	2976	3170	1700	3891	2829	3692	3718	512	1668	548	38587
ԸՆԴԱՄԵՆԸ		48902	6375	12143	12950	6954	15509	11217	14853	15002	2479	6569	2093	155 046

Ծանոթություն* ՀՀ ԿԳՄՍՆ ենթակա ուսումնական հաստատությունների «Շախմատ» առարկայի դասագրքերի և վարժությունների տետրերի հասանելիք քանակը մնում է ի պահ «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամում:

ԳՆՈՐԴ

_____ Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Ս. Լպուտյան

Հավելված N 2
«10» 05 *2021թ. կնքված*
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-21/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափա-բաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ապրանքի Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110/51	Դասագիրք «Շախմատ 2»,							38382000	38382000	38382000	38382000	38382000	38382000	38382000
2	22111110/52	Դասագիրք «Շախմատ 2» /վարժությունների տետր/							17664300	17664300	17664300	17664300	17664300	17664300	17664300
3	22111110/75	Դասագիրք «Շախմատ 3» /վարժությունների տետր/							17470350	17470350	17470350	17470350	17470350	17470350	17470350
4	22111110/90	Դասագիրք «Շախմատ 4» /վարժությունների տետր/							17364150	17364150	17364150	17364150	17364150	17364150	17364150

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

---------- Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------- Կ. Էպուտյան